ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-38-Ո-102
2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ ՄՇԱԿՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2018 թվականի սեպտեմբերի 20-ին, դռնփակ նիստում, քննարկելով որակավորման գրավոր քննության հարցեր մշակելու համար մասնագիտացված կազմակերպություն ընտրելու վերաբերյալ հարցը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, 100-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի օգոստոսի 23-ի թիվ ԲԴԽ-34-Ո-91 որոշման 2-րդ հավելվածով՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. 2018 թվականի որակավորման գրավոր քննության հարցեր մշակող մասնագիտացված կազմակերպություն ընտրել Հայաստանի Հանրապետության «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Արդարադատության ակադեմիայի կողմից ստանալուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2018թ. սեպտեմբերի 20
ք. Երևան